ՀՈԴԱԿԱԳԻՐ

ԿԱՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով էներգետիկ զարգացմանն ուղղված միջազգային իրավական փաստաթղթերը և էներգաարդյունավետության ապահովման և վերականգնվող էներգիայի կիրառման միջազգային հաջողված փորձը,

հաշվի առնելով հիշյալ միջազգային իրավական փաստաթղթերով, այդ թվում ՄԱԿ-ի գագաթնաժողովի ժամանակ «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման, ինչպես նաև Փարիզյան համաձայնագրով սահմանված նպատակների իրագործման շրջանակներում ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորությունները և դրանց բարեխիղճ կատարման կարևորությունը,

հաշվի առնելով ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնության շրջանակներում դաշնագրին միացած ՀՀ համայնքների կողմից ստանձնած պարտավորությունները և համայնքային Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի բարեխիղճ կատարման կարևորությունը,

հաշվի առնելով 2015-2017թթ. ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի օրենսդրական փոփոխությունները,

մտահոգված լինելով Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման խնդրով և ոլորտում ներդրումների իրականացման խոչընդոտներով,

նկատի ունենալով էներգիայի անարդյունավետ օգտագործման բացասական հետևանքները, կլիմայական մարտահրավերները,

նկատի ունենալով համայնքների աճող դերը կայուն էներգետիկ զարգացման գործում,

նկատի ունենալով կանանց սահմանափակ դերը համայնքային էներգետիկ և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականության մեջ,

կարևորելով էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում օրենսդրական շարունակական բարեփոխումների, էներգարդյունավետություն և վերականգնվող էներգետիկայի զարգացումն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ իրավական ակտերի ընդունման նշանակությունը,

կարևորելով կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացումն ապահովող ծրագրերի կառավարման (մշակում, իրագործում, մոնիթորինգ) գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նշանակությունը,

համոզված լինելով, որ կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման գործում լուրջ արդյունքների կարելի է հասնել միայն հասարակության գործուն ներգրավմամբ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության իրական գործընկերության ձևավորմամբ ու զարգացմամբ,

նպատակ ունենալով ակտիվ մասնակցություն ունենալ կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման գործում.

Սույն Հռչակագրին մասնակից քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ազդարարում են կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման, կլիմայի փոփոխության ոլորտում հանրային քաղաքականությունների մշակման, ջատագովման և այդ գործընթացներում համատեղ գործունեության և գործընկերության մասին՝ հռչակելով կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի հիմնադրումը:

Կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի նպատակներն են.

- նախաձեռնել համայնքներում վերականգնվող էներգետիկայի ներդրումների խթանման համար կարգավորող-օրենսդրական դաշտի բարեփոխումներ,
- նախաձեռնել և աջակցել համայնքային գնումների գործընթացում էներգարդյունավետություն և վերականգնվող էներգետիկայի զարգացումն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակման և/կամ բարելավման ու առաջխաղացման գործընթացներին,
- նպաստել Քաղաքապետների դաշնագրի անդամ քաղաքներում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման ուղղությամբ ծրագրերի, միջոցառումների և բյուջեների մոնիթորինգի արդյունավետ իրագործմանը,
- նպաստել ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկման և բարելավման մեխանիզմների և կարողությունների զարգացմանը՝ կարևորելով կին մասնագետների ներգրավումը գործընթացում,
- բարձրացնել ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման և, ջատագովության և մոնիթորինգի իրականացման գործում՝ համագործակցելով ոլորտային նախարարությունների և այլ պետական մարմինների ու դերակատարների հետ,
- բարձրացնել կանանց մասնակցությունը էներգաարդյունավետության, կայուն էներգետիկ և կլիմատիկ զարգացման ոլորտում, այդ թվում նաև համայնքային գործունեության վերահսկողության և մշտադիտարկման գործում,
- ամրապնդել մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և թափանցիկ և կայուն էներգետիկ զարգացմանն ուղղված գործունեության իրականացման հետ կապված ՔՀԿ-ների կարողությունները:

Կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիան ոչ ֆորմալ կառույց է, որը իր աշխատանքները կազմակերպում է անդամ կազմակերպությունների համաժողովի կողմից հաստատված աշխատակարգի միջոցով: Հռչակագիրը բաց է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:

Հռչակագրին մասնակից քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝

Աստղինե Պասոյան
«Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ տնօրեն

Նունե Սաքանյան
«Կանայք էներգետիկայում և կլիմայում» ՀԿ նախագահ

Մերի Հարությունյան
«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ նախագահ

Մելսիդա Կիկոյան
«Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ